ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3>>

ք. Երևան 17 օգոստոսի 2016թ.

ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը (այսուհետև՝ Հիմնարկ), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Մ. Քյուրքչյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀԱՐԳ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Հարությունյանի ու <<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Անդրեասյանի, որոնք գործում են Ընկերությունների կանոնադրությունների և <<ՀԱՐԳ>> ՍՊԸ-ի ու <<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի միջև 21.07.2016թ. կնքված Համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝ երկուսը միասին Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **<<ք. Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների>>** կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է **12 000 000 (Տասներկու միլիոն) ՀՀ** դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով և մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 ՀԱՐԳ>> ՍՊԸ-ի ու <<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի կողմից սույն պայմանագրի կատարման շրջանակներում համատեղ գործունեություն իրականացնելիս ընդհանուր գործերը վարում է <<ՀԱՐԳ>> ՍՊԸ-ն՝ համաձայն մասնակիցների միջև 21.07.2016թ կնքված Համատեղ գործունեության պայմանագրի:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,
կառավարական տուն 3,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011009330
ՀՎՀՀ 02553861

Տնօրենի պաշտոնակատար՝
Մ. Քյուրքչյան ----------
(ստորագրություն)
L.S.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՀԱՐԳ>> ՍՊԸ
ք. Երևան, Դեմիրճյան 29/4ա
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570001832670100
ՀՎՀՀ 02542032

Տնօրեն՝ Գ. Հարությունյան ----------
(ստորագրություն)
L.S.

.Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Սվաճյան 32, բն. 19
<<Առէկսիմբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2380017642120100
ՀՎՀՀ 01844994

Տնօրեն Ա. Ասդեսյան ----------
(ստորագրություն)
L.S.

Հավելված 1
17 08.2016 թ. կնքված N ՔՆՔՇԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ք. Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման շրջանակներում նախատեսվում է շուրջ 2100.0քմ մակերեսով, 4-5 հարկանի, շուրջ 170 ուսանողական տեղով հանրակացարանային մասնաշենք: Մասնավորապես, **ճարտարապետահատակագծային լուծումների շրջանակներում** կնախատեսվեն 2-3 տեղանոց ննջասենյակներ, յուրաքանչյուր ննջասենյակում միացյալ սանհանգույցներ ցնցուղարաններով, թվով 6 բուժկաբինետ, պահեստ, գրադարան, հերթապահի սենյակ, հանրակացարանի պատասխանատուի սենյակ՝ համատեղված սանհանգույցի հետ, ընդհանուր օգտագործման մակերեսներ (միջանցքներ, աստիճանավանդակներ, վերելակներ, թեքահարթակներ և այլն), լվացքատուն և չորանոց: **համաշինարարական աշխատանքների շրջանակներում** կնախատեսվեն հողային աշխատանքներ, հիմքերի և հիմնակմախքի, ծածկերի, միջնորմների, բացվածքների կառուցման աշխատանքներ, ներքին և արտաքին հաղորդակցուղիների՝ ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, էլ.մատակարարման համակարգերի (այդ թվում էլ.սնուցման ուժային գծի) կառուցման աշխատանքներ, ինչպես նաև հակահրդեհային ազդանշանման, •օդափոխության, տեսահսկման, տեխնիկական անվտանգության այլ համակարգեր, ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ, տարածքի բարեկարգում (այդ թվում կանաչապատում):
	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	*Հիմնավորում* ՀՀ 2016թվականի պետական բյուջե, ՀՀ կառավարության 23.06.2016թ թիվ 656-Ն որոշում, ճարտարապետահատակագծային առաջադրանք *Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> - ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> - ՀՀ քաղաքաշինության նախարարի 24.03.2014թ թիվ 87-Ն հրաման՝ «ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն

		խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին> - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> - ՀՀ կառավարության 13.12.2007թ թիվ 1490-Ն որոշում, - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք - ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որ. <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> և այլն: -
2	Նախագծման փուլերը	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում (այդ թվում ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության ձեռքբերում, միջանկյալ համաձայնեցում շահագրգիռ պետական մարմինների հետ) ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: 1. **<u>Աշխատանքային նախագիծ</u>**՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր»
3	Նախագծի կազմը	**Աշխատանքային նախագծի կազմում՝** ա) ելակետային տվյալներ -- ճարտարապետահատակագծային առաջադրանք, ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ՝ շինարարության տևողության հաշվարկով ե) գլխավոր հատակագիծ, ճարտարապետական և կոնստրուկտորական մաս, ճարտարապետական, շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով, է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ:
4	Այլ պահանջներ	Նախագծի ***միջանկյալ (գրավոր)*** համաձայնեցում համայնքի ղեկավարի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) տեսչության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, ինչպես նաև ըստ նորմատիվային պահանջի՝ ՀՀ բնապահպանության և ՀՀ առողջապահության նախարարությունների հետ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում **ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության** ձեռքբերում: Նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ կառ. 23.06.2011թ թիվ 879-Ն որոշման Կարգի 6-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն: Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների

		մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 7 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով: Աշխատանքների ֆինանսավորումը ապահովել Պատվիրատուի՝ ՀՀ ՔՆ <Քաղաքաշինական ԾԻԳ> ՊՀ պատվիրատվությամբ նախատեսվող նախագծանախահաշվային ***փաստաթղթերի համալիր փորձաքննության*** արդյունքների հիման վրա՝ դրական եզրակացության առկայությամբ:
Աշխատանքի կատարման ժամկետը		
	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 130-րդ օրացուցային օրը ներառյալ

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,
կառավարական տուն 3,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011009330
ՀՎՀՀ 02553861

Տնօրենի պաշտոնակատար
/ Մ. Մարիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՀԱՐԳ>> ՍՊԸ
ք. Երևան, Դեմիրճյան 29/4ա
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570001832670100
ՀՎՀՀ 02542032

Տնօրեն՝ Գ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Սվածյան 32, բն. 19
<<Առէկսիմբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2380017642120100
ՀՎՀՀ 01844994

Տնօրեն՝ Մ. Սեդրեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
18 08.2016 թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/3
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
ք. Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ								12 000 000	12 000 000	12 000 000	12 000 000	12 000 000	**12 000 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,
կառավարական տուն 3,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011009330
ՀՎՀՀ 02553861

Տնօրենի պաշտոնակատար՝
Մ. Քյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՀԱՐԳ>> ՍՊԸ
ք. Երևան, Դեմիրճյան 29/4ա
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570001832670100
ՀՎՀՀ 02542032

Տնօրեն՝ Գ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
<<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Սվաճյան 32, բն. 19
<<Առէկսիմբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2380017642120100
ՀՎՀՀ 01844994

Տնօրեն՝ Կ. Ամիրեանյան
(ստորագրություն)

Հավելված 3
<<_____>>_____20 թ.
կնքված N_____ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< >>_____ 20 թ. կնքված
կնքված N_____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն